<<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ>>ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Վ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ*

ԵՐԵՎԱՆԻ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.192 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Գրական ակնարկ 6
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ 8
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ԱՌԱԿՆԵՐԻ և ՀԵՔԻԱԹԻ ՄԻՋՈՑՈՎ 11
ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 15
Եզրակցություն 17
Օգտագործված գրականության ցանկ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից մանկավարժության կարևոր պահանջներից է՝ առարկայի դասավանդման շրջանակներում, երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության գլխավոր նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ:

21-րդ դարում նոր տեխնոլոգիաները, ծրագրերը, կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու նորարարությունները թելադրում են նորովի մոտեցում յուրաքանչյուր աշակերտի: Աշխարհաքաղաքական այս վայրիվերումների ճանապարհին կարևոր դեր ունի ուսուցիչը՝ արժեհամակարգ ձևավորելու և հումանիստ, հայրենասեր, ընտանիքը կարևորող սերունդ դաստիարակելու գործում:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, ժողովրդագրական, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Չի կարելի մարդու հոգևոր աշխարհը հանգեցնել միայն ուսման: Եթե մենք ձգտենք այն բանին, որ երեխայի բոլոր ուժերը կլանվեն դասերով, կյանքը նրա համար

կդառնա անտանելի: Նա պետք է լինի ոչ միայն դպրոցական, այլև ամենից առաջ մարդ՝ իր բազմակողմանի հետաքրքրություններով, պահանջմունքներով, ձգտումներով: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն:

Հետազոտության նպատակը. Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին:
- Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

Հետազոտության խնդիրները. Նպատակից ելնելով ձևակերպում ենք հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը:
- պարզել՝ ի՞նչ ասել է «արժեքային համակարգ» դրա բովանդակությունը մայրենիի դասավանդման համատեքստում:
- բացահայտել արժեքային համակարգի հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորման ուղիներն ու միջոցները:

- ուսումնասիրել հեքիաթների ազդեցությունը սովորողների արժեքային համակարգի գործում:

Գրական ակնարկ

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը, մասնավորապես՝ մայրենիի դերը: Սերունդների կրթության և դաստիարակության արդյունավետության խնդիրը միշտ եղել է մանկավարժների, փիլիսոփաների, հետազոտողների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Այնուամենայնիվ, որքան էլ հոգեբանները, փիլիսոփաները առաջարկեն մեթոդներ կամ ռազմավարություններ, ուսումնառության արդյունավետության խնդիրը մնում է չլուծված կամ ոչ ամբողջապես լուծված, քանի որ ուսուցչի համար խնդիր է մնում, թե ինչպե՞ս կիրառվի կամ օգտագործվի այդ գործիքը, արդյո՞ք դասի մոդելը կօգնի հասնել դրան: [1]

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, ալև սեփական կենսափորձի հիման վրա: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության և բազմազանության մեջ: ՈՒստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակութան և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Ըստ այդմ էլ, յուրաքանչյուր ուսուցիչ գտնում է իր առարկային համապատասխանող ռազմավարություն և տալիս առաջ եկած խնդրի լուծում:

[1] Գյուլամիրյան Ջ., Խոսքի զարգացում, Երևան, 2004 թ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են՝ ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին:

Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի համար, բայց բացարձակ անկարևոր մյուսի համար: Արժեքների տեսությունում կարևորվում է այն հայեցակարգը, որտեղ առանձնացվում են արժեքների ներքոնշյալ երեք հատկանիշները.

- Արժեքները համոզմունքներ են: Մարդիկ, որոնց համար անկախությունը կարևոր արժեք է, սթափվում են, երբ նրանց անկախությունը վտանգվում է, հուսահատվում են, երբ անկարող են լինում այն պաշտպանելու, և վերջապես երջանիկ են, երբ կարող են վայելել այն:
- Արժեքները կապված են ցավալի նպատակների հետ, որոնք մոտիվացնում են մարդուն կատարելու որոշակի գործողություններ: Մարդիկ, որոնց համար հասարակական կարգը, արդարությունը կարևոր արժեքներ են, մոտիվացնում են հետապնդել այդ նպատակները:
- Մարդիկ որոշում են, թե ինչն է լավ, ինչը՝ վատ, արդարացնում կամ մեղավոր են ճանաչում, գործում կամ խուսափում են՝ հենվելով իրենց համար թանկ արժեքների հնարավոր հաջորդականության վրա:

ՈՒստի կարող ենք ասել, որ կախված հասարակության նորմերից, մարդու շրջապատից և ընտանեկան կարգավիճակից արժեքային համակարգը ցանկացած մարդու համար անհատական է ու յուրովի: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է մայրենիի դերը՝ սովորողների մեջ արժեքային համակարգ ձևավորելու գործում:[2]

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացնում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսության, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում:[3]

Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ եւ այդ

---

[2] Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2,
[3] Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, Երևան 2013 թ.:

պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձեւավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թէ մեկուսացված կամ առանձին մոտեցում այլ գիտելիքների և կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:[4]

Ընդհանուր առմամբ, արժեհամակարգի ձևավորումը կրտսեր դպրոցականների մոտ նպատակ ունի ձևավորել հայրենասեր անձ և քաղաքացի, որը պետք է՝[5]

1. Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:
2. Հարգի Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:
3. Գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:
4. Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը:
5. Կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ,

[4] Մուդրիիկ Ա. Վ. – Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում - Երևան 1986:
[5] Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:

օրինապահ, բարեկիրթ:

6. Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին ու ճշմարիտը:
7. Գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք:
8. Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը:
9. Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ:
10. Անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը:
11. Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը:
12. Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

Այսօր կրթությունը պետք է դառնա մեզ դարերով ավանդված ազգային, մշակութային, հոգևոր արժեքների փոխանցողն ու պահպանողը: Ազգային արժեքների ձևավորումն ու պահպանումն այսօր դպրոցի կարևորագույն նպատակներից է: Սովորողների արժեքային համակարգի ձևավորման և այն ամուր հիմքերի վրա դնելու խնդիրը ներկայումս դպրոցի գլխավոր առաքելությունը պետք է լինի: Այսպիսով՝ կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը բավականաչափ բարդ և շարունակական գործընթաց է և երկար ժամանակ է պահանջում:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ԱՌԱԿՆԵՐԻ և ՀԵՔԻԱԹԻ ՄԻՋՈՑՈՎ

Տարրական դասարաններում գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցումն ունի մի շարք առանձնահատկություններ: Դրանց նկատառմամբ և ճիշտ գործադրմամբ աշակերտների կողմից թեմայի յուրացումը դառնում է առավել արդյունավետ: Մայրենիի ուսուցումը արժեքներին հաղորդակցվելու լավագույն միջոցներից է: Սա նշանակում է, որ մայրենիի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-քերականական նախնական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, այլ՝ դրանց միջոցով նաև ազգային հոգևոր ու բարոյական արժեհամակարգին հաղորդակցման ապահովում:[6]

Դեռևս առաջին դասարանից ուսումնասիրվող նյութերում մեծ տեղ են գրավում խրատական առածներն ու ասացվածքները, որոնք արժեքային դաստիարակության տեսանկյունից մեծ նշանակություն ունեն: Վերջիններս երեխաների մեջ սերմանում են սեր, հոգատարություն:

«Չորս խնձոր» ուսումնական նյութի մատչելի և հասկանալի մատուցմանը և այն արժեհամակարգի ձևավորմանն ուղղելուն մեծապես նպաստում են աշխատանքն արժևորելու, կարևորելու և գնահատելու, երեխաների մեջ բարություն սերմանող հետևյալ ասացվածքները. «Մի՛ գովիր մարդու տեսքը, այլ գովի՛ր մարդու խելքը, իմաստությունը, գործը», «Ամեն գործի վերջն է գովելի»:Երեխաների մեջ աշխատանքի նկատմամբ սեր և դրական վերաբերմունք է սերմանում նաև «Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն» ասացվածքը:

Ստեղծագործական, գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ

- խորհեն ընթերցածի շուրջ
- գնահատեն նրանց արարքները

[6] http://gspi.am/media/journal/2014n1b/22.pdf Գ. Ն. Հարությունյան, Մանկավարժական խնդիրները և դրանց լուծման ուղիները տարրական դպրոցում:

- իմաստավորեն նրանց խնդիրները
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Առակը, լինելով ժողովրդական բանահյուսության մեջ ձևավորված փոքրածավալ էպիկական ժանր, մասնավորապես կենդանիների մասին հեքիաթի տարատեսակ, սեղմ սյուժեով ու այլաբանական բովանդակությամբ գրական հնագույն տեսակներից մեկն է, որն իր բարոյախոսությամբ օրինակ դառնալու և առ ակն կատարվածը ներկայացնելու ներքին հնարավորություններով յուրատիպ ազդեցություն կարող է ունենալ աշակերտների դաստիարակության վրա:

Առակներն ստեղծում են աշխարհը մբռնում՝ ինչ-որ տեղ, ինչ-որ ժամանակ, որի համակարգում առաջնային արժեք են ձեռք բերում արծարծված թեմաների համընդհանրությունը, համամարդկայնությունը, բոլոր ժամանակներին և բոլոր տարածություններին բնորոշ լինելը: Առակը ուսուցողական, բարոյախրատական, դաստիարակչական բնույթի փոքրածավալ գրական-գեղարվեստական ստեղծագործություն է: Այն ունի բազմադարյա պատմություն:

Առակի այնառանձնահատկությունը, որ դրանցում հանդես են գալիս ինչպես մարդիկ, այնպես էլ կենդանիներ, բույսեր, բազմապատկում է նրա նկատմամբ տարրական դասարանի սովորողների հետաքրքրությունը, և նրանք միանգամից «մտնում են» թեմայի մեջ, իսկ այն հանգամանքը, որ առակներում կենդանիների, բույսերի ու երկնային մարմինների միջոցով ծաղրվում են մարդկանց վատ սովորույթներն ու արատները, գովաբանվում են նրանց առաքինությունները, ուսուցչին հնարավորություն է տալիս լուծելու ոչ միայն ուսումնական, այլև դաստիարակչական խնդիրներ, այն է՝ ձևավորել սովորողների արժեհամակարգը, սովորեցնել նրանց սեփական կարծիք հայտնել և պաշտպանել այն: Այստեղ ուսուցչին օգնության է գալիս այն իրողությունը, որ, այլաբանորեն գործածվելով, շատ կենդանիներ վերածվել են խորհրդանիշերի, օրինակ՝ առյուծը քաջություն, խիզախություն է խորհրդանշում, աղվեսը՝ խորամանկություն, նապաստակը՝ վախկոտություն և այլն:[7]

Անգնահատելի է նաև հեքիաթի դերը անհատի դաստիարակության ու ձևավորման, չարն ու բարին ընկալելու գործում: Տարրական դասարաններում այս

[7] Զեյնալյան Ն.Ա. Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները, 2017թ.:

կամ այն դասանյութի ուսումնասիրումը հիմնականում իրականացվում է ընթերցանության միջոցով, որը հնարավորություն է տալիս կազմակերպել երե-խաների ինքնուրույն գործունեությունը և նպաստել նրանց մտածողության, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գոր-ծունեությոան և ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիարակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: ՈՒսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական դաստիարակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրութունը, դրանում գլխավորի առանձնացումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենի առարկայի դասավանդման ընթացքում մենք իրականցնելու ենք հեքիաթների միջոցով, օգտվելով՝ զրույցի մեթոդից:[8]

Զրույց դասը կիրառվում է սովորողի մտավոր գործունեությունն ակտի-վացնելու նպատակով: Զրուցի ընթացքում սովորողը կրկնում և ամրապնդում է անցած նյութը, ձեռք բերում նոր գիտելիքներ: Ի հայտ են գալիս սովորողի ան- հատական առանձնահատկությունները, մշակվում են տրամաբանորեն մտածելու, փաստերի և երևույթների միջև նոր կապեր հաստատելու, ուշադիր լսելու, վիճելի հարցերին քննադատաբար մոտենալու և կոլեկտիվ ձևով լուծելու կարողություններ: Զրույցը չի ընթանում խստորեն մշակված պլանով, կիրառվում է ուսումնական պրոցեսում այլ մեթոդների հետ զուգակցված: Սովորողների հետ աշխատանքում չափազանց կարևոր է ընտրել հաղոր-դակցման նրանց լեզուն, մեթոդները, այսինքն՝ խոսել նրանց լեզվով: Այդ պատճառով, հեքիաթները սովորողների հետ շփման արդյունավետ միջոցներից մեկն են համարվում: Հեքիաթը սովորողի հոգեկան զարգացման համար այնպիսի կարևոր միջոց է, ինչպիսին որ խաղն է: Սովորողի ծանոթացումն արտաքին աշխարհի և մարդկանց փոխհարաբերությունների հետ

[8] Մ. Աստվածատրյան, Ա. Արնաուդյան, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին,Այռեքս, Երևան, 2004:

սկսվում է մանկական հեքիաթներով: Ժամանակից սովորողին բավարար չէ պարզապես հեքիաթ կարդալ, զրուցել բովանդակության և նրա հերոսների մասին: Մասնագետները նշում են, որ անհրաժեշտ է նրանց սովորեցնել բացահայտել հեքիաթում թաքնված իմաստները և կյանքի դասերը:

Մարդու կանքում դպրոցական տարիքը այն շրջանն է, երբ դրվում են անձնային որակների, բարոյական զգացմունքների, գնահատումների հիմքերը:

Երեխան սկսում է գնահատել ինչպես ուրիշի, այնպես էլ իր լավ ու վատ արարքները:

Հեքիաթների դերը սովորողի զարգացման գործում բազմազան է. սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում: Հեքիաթը սովորողներին մատչելի լեզվով կյանք է սովորեցնում, պատմում չարի ու բարու մասին: Սովորողները ավելի հեշտ են ընկալում հեքիաթը, քան մեծահասակների դաստիարակչական քարոզները: Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել սովորողի երևակայութունը և ստեղծագործական պոտենցիալը: Մանկական հեքիաթները ընդլայնում են սովորողի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր, ձևավորում են նաև հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն: Դպրոցական տարիքում է ձևավորվում այնպիսի կարևոր զգացմունք ինչպիսին է ապրումակցումը: Ապրումակցումը այն զգացմունքն է, որը հնարավորություն է տալիս երեխային իրապես ապրել հեքիաթի հերոսների կյանքով՝ տխրել, երբ հեքիաթի հերոսների հետ դժբախտություններ են կատարվում, իրենց վրա վերցնել հեքիաթի հերոսների կերպարն ու վարքագիծը, ինչն էլ արդեն դաստիարակչական մեծ նշանակություն է ստեղծում, որպեսզի իրական կյանքում ևս իրենք կարողանան դրսևորել անձնային դրական որակներ, հատկություններ: [9]

[9] Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.:

ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Սովորողների մեջ բարոյական արժեքներ սերմանելու և պահպանելու համար մշակվել են որոշ մեթոդներ և ռազմավարություններ.

- դրամատիզացում
- պատմություն
- անձնական օրինակներ
- դերախաղեր
- խմբային աշխատանք
- հարցադրումներ

Դասարաններից մեկում դասերը արդյունավետ և նպատակային դարձնելու համար հաճախ եմ օգտագործում «Մտագրոհ» մեթոդը: Հարց ու պատասխանի միջոցով ամբողջությամբ վեր են հանվում ամենակարևոր մտքերը, գաղափարները:

«Հրաշք վրձինը» դասը վարելիս իմ առջև խնդիր էի դրել աշակերտների հետ քննարկել օգտակար լինելու պատրաստակամությունն ու բարությունը որպես հիմնարար արժեք, կարևորել վերջիններիս նշանակությունը և զարգացնել այն սիրո ու ջերմության մեջ պահելու կարողունակությունը:

Խթանման փուլը սկսեցի հանելուկով: Ցուցադրեցի վրձինները և հարցրեցի երեխաներին, թե ինչ կցանկանան նկարել, ինչ հայտնի նկարիչների անուններ և ինչ կերպարվեստի ժանրեր գիտեն (ծովանկարչություն, մանրանկարչություն, նատյուրմորտ, բնանկար, ինքնանկար, դիմանկար):

Իմաստի ընկալման փուլում՝

- Բնագիրը կարդացին շարունակելով,
- Մանրամասն վերարտադրելով,
- Բառային աշխատանք կատարելով. գրատախտակին գրեցին վրձին, ավտոմեքենա, Նոր տարի, Ձմեռ պապ, օդանցք, զննել, զարդարել, պարգևել, կենդանացնել բառերը:
- Հարցեր տվեցի բնագրի շուրջ.
  - Ո՞ր տոնի կապակցությամբ էր Բակուրը նվերներ ստացել և ու՞մ կողմից:
  - Ի՞նչ մասնակցություն ուներ նրա հորեղբայրը:
  - Ի՞նչ նվերներ էր ստացել Բակուրը:
  - Ո՞վ էր վրձնին կախարդական հատկություն տվել:
  - Աշխատեցին բնագրի շուրջ՝ գտան հոգնակի թվով գոյականներ և

դարձրեցին եզակի թիվ:

- Կազմեցին պատմողական և հարցական նախադասություններ:

Ֆիզկուլտ դադար

- Մեկնաբանեցի և բացատրեցի ունկ (կանթ, բռնակ), բուն և բույն բառերը:
- Հարցեր տվեցի նոր նյութի վերաբերյալ.

- Վրձնի կախարդանքը քանի՞ ժամ կարող էր գործել:
- Բակուրի կատարած առաջին հրաշքը ո՞րն էր:
- Տարվա ո՞ր եղանակն էր:
- Է՞լ ինչ հրաշքներ գործեց նա:

Կշռադատման փուլում արժեքային համակարգը զարգացնելու համար գործիք էի ընտրել

«Մտագրոհ» մեթոդը: Բակուրին նկարագրեցին որպես բարի, ուշադիր, բնասեր, հոգատար, սրտացավ, կարեկցող անձնավորություն:

Վերջնարդյունքում երեխաները սովորեցին՝

- Կատարել բարի գործեր, պատրաստակամ եղան օգնելու, կարեկցելու, աջակցելու մարդկանց,
- Սկսեցին սիրել, հոգ տանել բնության և կենդանիների մասին:

Տնային աշխատանք հանձնարարեցի Ա. Պարսամյանի Հրաշք վրձինը սահուն ընթերցել, ներկայացնել Հիսուսի հրաշքներից մեկը:

Եզրակցություն

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել ,որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը:

Սեփական փորձից կարող եմ եզրակացնել, որ հեքիաթը և առակները գեղարվեստական այն լավագույն ժանրերից են, որը կյանքի բոլոր փուլերի համար է և կյանքի յուրաքանչյուր շրջափուլում այն իր ազդեցությունն ու բարոյախոսությունն ունի: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը եւ չի հակասում դրանց: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենահիմաստալից կրթական համակարգը:

Երկրի ապագա քաղաքացիների անձնային որոշ որակներ ձևավորվում են հենց դպրոցում: Այդ պատճառով էլ պետք է փորձենք լինել առավել համբերատար, հանդուրժող, լավատես և հանդես չգալ միայն ժամանակակից երեխայի առանձնահատկությունները քննադատողի դերում: Գուցե մեր անսահման սիրով ու նվիրումով, հոգու ջերմությամբ, պատասխանատվության գիտակցումով, մարդասիրությամբ, հոգատարությամբ և էթիկայով փորձենք գտնել երեխայի հոգու գաղտնարանները տանող բանալին:

Քսաներորդ դարավերջի և քսանմեկերորդ դարասկզբի քաղաքացին հասկանում էր, որ այն երկիրն է հավակնում ունենալ լավ կրթական համակարգ, որը ոչ միայն գիտելիքի փոխանցումը, կարողություն-հմտության ձևավորումն է ապահովում, այլև իսկապես պատասխան է տալիս սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին բոլոր հիմնահարցերին: Դրանք էին՝

- լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,
- դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների,

այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ և այլն:

Համաշխարհայնացման պայմաններում մենք անպայման պետք է հաշվի առնենք եվրոպական առանցքային կոմպետենցիաները՝ բայց միշտ հիշելով, որ չի կարելի ստեղծել «ամորֆ մարդ, գործարանային արդյունք», այլ՝ հայ մարդ, հայ քաղաքացի, որն ապրում է քսանմեկերորդ դարում: Կրթական տիեզերական դաշտի մեջ մենք պետք է կարողանանք մեր տեսակետը հաստատել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ., Խոսքի զարգացում, Երևան, 2004 թ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015:
2. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2,
3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, Երևան 2013 թ.:
4. Մուդրիիկ Ա. Վ. – Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում - Երևան 1986:
5. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:
6. http://gspi.am/media/journal/2014n1b/22.pdf Գ. Ն. Հարությունյան, Մանկավարժական խնդիրները և դրանց լուծման ուղիները տարրական դպրոցում:
7. Ձեյնալյան Ն.Ա. Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները, 2017թ.:
8. Մ. Աստվածատրյան, Ա. Արնաուդյան, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին,Այռեքս, Երևան, 2004:
9. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.: